ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 43/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 02.12.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-43/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, ի լրումն 02.12.2014թ. բողոքի Ընկերության 10.12.2014թ. գրությունը, ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 10.12.2014թ թիվ 08-325 գրությունը և կից փաստաթղթերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2014թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը և ԳԲԽ-43/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 15.12.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

<u>1. «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.12.2014թ. ներկայացրած բողոքում նշել է, որ ս.թ. նոյեմբերի 19-ին ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության գնային առաջարկը չի ընդունվել և վերադարձվել է առանց բացվելու:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավեր-ծանուցման (այսուհետ նաև՝ Հրավեր) համաձայն՝ հայտերն ընդունվելու էին Արմենակյան 13 հասցեով, մինչև ծանուցմանը հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրվա ժամը 12:00, իսկ հայտերը պետք է բացվեին նույն օրը, նույն հասցեում ժամը 12:30-ին: Գնային առաջարկների բացման օրը՝ դեկտեմբերի 1-ին, Ընկերությունը Հրավերում նշված հասցեով ժամը 12:25-ին ներկայացրել է իր գնային առաջարկը, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից այն չի ընդունվել, քանի որ հանձնաժողովն արդեն բացել էր ծրարները և նիստը հայտարարել էր ավարտված:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը Հրավերը կազմել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) պահանջների խախտմամբ, ինչը հանգեցրել է Ընկերության շահերի ոտնահարման, մասնավորապես Պատվիրատուն խախտել է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի պնդմամբ ակնհայտ է, որ սույն Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը պետք է լիներ ոչ թե 12:00-ն, այլ 12:30, հետևաբար՝ Ընկերությունը հայտը ներկայացրել է ժամանակին՝ 12:25-ին:

Ի լրումն 02.12.2014թ. բողոքի՝ Ընկերությունը 10.12.2014թ. գրությամբ հստակեցրել է բողոքի պահանջն ու առարկան, խնդրելով՝ չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի 01.12.2014թ. կայացած նիստի արդյունքները և Պատվիրատուի կողմից Ընթացակարգը հայտարարել չկայացած, իսկ ներկայացված բողոքի առարկա դիտարկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ կազմված ընթացակարգի հրավերը:

<u>2. ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի կապակցությամբ Պատվիրատուն 10.12.2014թ. թիվ 08-325 գրությամբ Կենտրոն է ուղարկել Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 10.12.2014թ. ժամը 10:00-ին կայացած նստի թիվ 4 արձանագրության և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության

տեքստի պատճենները, որոնց համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմնավոր է համարել բողոքաբերի պահանջը և գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած:

3. ԳԲԽ-43/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 02.12.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-43/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-43/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լվացքի ծառայություն-ների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Հրավերում նշված հայտերի ընդունման վերջնաժամկետի և հայտերի բացման օրը՝ ս.թ. դեկտեմբերի 1-ին, Ընկերությունը հայտերի ընդունման՝ ք.Երևան, Արմենակ-յան 13 հասցեով, ժամը 12:25-ին ներկայացրել է գնային առաջարկ, որն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2014թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները չպահպանելու հիմքով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2014թ. թիվ 3 որոշմամբ հաստատվել և հրապարկվել է Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայ-տարարության տեքստը:

5. Խորհրդի հիմնավորումը և եզրահանգումը

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ն 02.12.2014թ. ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ համարել Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 01.12.2014թ. կայացած նիստի արդյունքները և Պատվիրատուի կողմից լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԾՁԲ-15/1» ծածկագրով շրջանակային համա-

ձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած: Սակայն, բողոքի քննության ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2014թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Նկատի ունենալով, որ «Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 02.12.2014թ. ներկայացրած բողոքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած վերոնշյալ որոշման առկայության պայմաններում դարձել է առարկայազուրկ, ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գարանտիա-Շեն» ՍՊԸ-ի 02.12.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ազգանուշ Ֆրանգյան**

Անդամներ՝ **Մանե Նազարյան**

Աիդա Կարապետյան